



Հովսեփ Քատսյան.

«ԺԱՌԱՆԳՈՐԴ ԼԻՆԵԼՈՒ ԸԱՍԱՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏԶ ՌԻՆԵՆԱԼ»

«ԺԱՄ» ամսագիր, գարուն, 2017 թգ:
<http://www.zham.ru/>

Զրուցեց «ԺԱՄ» պարբերականի գլխավոր խմբագիր՝ Աննա Գիվարգիայանը

Սփյուռքն ընդհանրապես, ոչ միայն Հունաստանում, ինքնության տազնապի մեջ է: Կուսակցական հատվածապաշտությունը հարվածի տակ է դրել մեր արմատները:

Հովսեփ Քատսյանը ծնվել է 1948 թ-ին Աթենքում: Ուսանել է բժշկություն Աթենքի Կապոդիստրիայի անվան ազգային համալսարանում: Հունաստանի հայ համայնքի ակտիվ հասարակական գործիչ է, բժիշկ, գրող, թարգմանիչ, խմբագիր, պատմաբան, հրատարակիչ, երկու որդիների հայր:

Տարբեր տարիներին հրատարակել և խմբագրել է «Մենք» ամսագիրը (1981–1984 թթ.), Սփյուռքի հայ նորագույն ազատագրական պայքարին զորակցող «Հայկական ժողովրդային շարժման» (ՀԺՇ)՝ «Հայ ֆետայի» հունարեն պաշտոնաթերթը (1982–2001 թթ.), «Հունա-հայկական» (ΕΛΛΗΝΟ ΑΡΜΕΝΙΚΑ) ամսագիրը (1991–1999 թթ.): Հայությանը և հայ-հունական առնչություններին նվիրված 60 ընդարձակ ուսումնասիրություն-հոդված է հրատարակել հունական «Նեմեսիս» ամսագրում (1999–2005 թթ.): Հայ ժողովրդի պատմության, հայ-հունական հարաբերությունների մասին չորս տասնյակից ավելի գրքերի հեղինակ ու թարգմանիչ է:


1982 թ. հիմնադրել և մինչև այժմ գլխավորում է «Հունա-հայկական ուսումնասիրությունների կենտրոնը»: Հունական տարբեր գիտական, հանրային և պետական, ինչպես նաև հայկական միջավայրերում հանդես է ելել հետազոտական հրատարակախոսություններով, դասախոսություններով, հարցազրույցներով:

- Պարոն Քատսյան, Դուք կրթությամբ բժիշկ եք, սակայն հեղինակել ու թարգմանել եք հայ ժողովրդի պատմությանը, հայ-հունական հարաբերությունների առնչվող չորս տասնյակից ավելի գրքեր, հրատարակել ու խմբագրել եք տարբեր պարբերականներ: Ինչպե՞ս եղավ, որ մտաք այդ ասպարեզ:


- Ես մեծացել եմ հունական միջավայրում: Հայերեն չիմանալով՝ տասնյոթ տարեկանում ֆրանսերենով կարդացի հայ ժողովրդի պատմության մասին մի գիրք և առաջին անգամ ծանոթացա մեր ժողովրդի հերոսական պատմությանը:

- Եվ սկսեցիք որոնել Ձեր արմատները:

- Այո: Դրան հաջորդեցին Վիլյամ Սարոյանի «Իմ անունն է Արամ» և միշտից այլ գրքեր, ճանաչեցի ու սիրտս լցվեց



Առնոլդ Թոյնբի, «Հայկական սարսափներ. մի ազգի բնաջնջումը» գիրքը՝ հունարենով



«Հունա-հայկական» (ΕΛΛΗΝΟ ΑΡΜΕΝΙΚΑ) ամսագիրը (1991–1999 թթ.)

հպարտությամբ, որ մասնիկն եմ այդ հին ժողովրդի:

- Հետագայում երևի հասկացաք, որ կարողեք և պետք է օգնեք նաև այլ հայ պատանիների՝ գտնելու իրենց արմատները, կամ այլազգիների՝ ճանաչելու հայերին ու Հայաստանը:

- Խթաններից մեկը դա էր, անշուշտ: Բայց նաև հայկական հարցի, հայ դատի մասին բարձրաձայնելը, աշխարհին, մասնավորապես այն երկրում, որտեղ ապրում եմ, մեր ճակատագրի մասին պատմելը: Իդեալ, իմ հրատարակած գրքերի շարքում են հայոց ցեղասպանությանը վերաբերող երկու ամենակարևոր ու ծանրակշիռ հրատարակությունները՝ Հենրի Մորգենթաուի «Բոսֆորի գաղտնիքներ. 1913–1916» և Առնոլդ Թոյնբիի «Հայկական սարսափներ. մի ազգի բնաջնջումը» գրքերը: Իսկ մեր նորագույն պատմությանն առնչվող «Ղարաբաղյան հարցը» 300-էջանոց պատմագիտական իմ ուսումնասիրությունը մեծ տարածում ունեցավ հույն մտավորականների շրջանում:

- Հայ և հույն ժողովուրդների կապերը դարերի պատմություն ունեն, հետաքրքրական է՝ ինչպե՞ս են հայերը հայտնվել Հունաստանում, ինչպե՞ս է ձևավորվել ներկայիս համայնքը:

- Երբ խոսում ենք հայ և հույն ժողովուրդների, Հայաստանի և Հունաստանի հարաբերությունների մասին, պետք է նկատի ունենանք մեր երկրների պատմական անցյալը: Հունաստանն ու Հայաստանն իրենց այսօրվա սահմանների մեջ պետք չէ պատկերացնել: Սրանք ժամանակին սահմանակից պետություններ են եղել. հույների ներկայությունը հասել է մինչև Կարին (Երզրում), որը հույները Թեոդոսիոպոլիս են կոչել, մյուս կողմից էլ հայերի ներկայությունն է հասել մինչև Կոստանդնուպոլիս և Իզմիր: Հետևաբար, ավելի ճիշտ կլինի խոսել հայերի և հույների ընդհանուր հարաբերությունների մասին:

Հունաստանն առաջիններից մեկն էր, որ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի Հանրապետության հետ Խորհրդային Միության փլուզումից և 1991 թվականին Հայաստանի անկախացումից անմիջապես հետո՝ 1992 թ. հունվարին:

Սկիզբը՝ էջ 8

- Ինչպե՞ս եք գնահատում հայ-հունական երկկողմ հարաբերությունները. քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային...

- Անցած քառորդ դարի ընթացքում երկկողմ հարաբերություններն ընդգրկել են հիմնականում մեր երկրների քաղաքական, ռազմական, միջխորհրդարանական ոլորտները: Փոխադարձ այցելություններ են եղել նախագահի, Աժ նախագահի, արտգործ նախարարի մակարդակներով:

Միջպետական համագործակցությունն ամրագրվել է 40-ից ավելի երկկողմ պայմանագրերով, արձանագրություններով և հուշագրերով:

Բավականին արդյունավետ են հայ-հունական ռազմական հարաբերությունները, որոնք ընդգրկում են ռազմական կրթության, սպայակազմի վերապատրաստման, խաղաղապահության, ռազմական արդյունաբերության և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտները: Եվ պատահական չէ, որ 2004 թ. հայ զինվորականների արձանագրության գումարտակը Կոստվոյում իր խաղաղապահ առաքելությունը սկսեց հունական զորախմբի կազմում:

Հայ-հունական հարաբերությունների ամենաթույլ կողմերից մեկն, իմ կարծիքով, տնտեսական համագործակցության ոլորտն է:

- Ի՞նչ եք կարծում, ո՞րն է պատճառը:

- Պատճառները տարաբնույթն են: Շրջափակման և փակ սահմանների հետևանքով ապրանքաշրջանառության սահմանափակումները, ուղիների ծախսատարությունը, թերևս, նաև Հունաստանում հայկական կապիտալով ընկերությունների բացակայությունը:

- 20 տարի խմբագրել եք Սփյուռքի հայկական ազատագրական պայքարին զորակցող հունարեն «Հայ ֆետայի» ամսագիրը: Պատմե՞ք այդ մասին:

- Կուզեմ ընդգծել, որ այդ տարիներն իմ կյանքի ամենա երջանիկ օրերն էին, քանի որ այդ հրատարակության միջոցով ես էլ կարողացա իմ փոքր ներդրումն ունենալ մերօրյա ֆիդայական հերոսական պայքարում: Այդ տարիների ընթացքում «Հայ ֆետայի» ամսագիրը, որ Հայկական ժողովրդային շարժման հրատարակությունն էր, հազարավոր տպաքանակով մատուցվել է ոչ միայն հունահայերին, այլ նաև հույներին: Նրանց դա հետաքրքրում էր, քանի որ հատկապես այդ տարիներին հույները մեծապես զգում էին թուրքական ծավալապաշտության սպառնալիքն իրենց երկրի համար:

- Իսկ հայերենի չիմացությունը խոչընդոտ չեղա՞վ:


- Այդ տարիներին ես միաժամանակ սովորեցի հայերեն, նաև արևելահայերեն, թեև չեմ կարող հավակնել, թե լիովին տիրապետում եմ:

- Հունաստանի խորհրդարանը 1996 թվականի ապրիլի 25-ին ապրիլի 24-ը Օսմանյան Թուրքիայի կողմից 1915 թվականին իրականացված հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օր ճանաչելու մասին որոշում ընդունեց: Ի՞նչ կասեք այդ և այն դերակատարության մասին, որ Ձեր խմբագրած «Հունահայկական» ամսագիրն ունեցավ այդ հարցում:

- Անցյալ դարի 90-ական թվականներին հունահայ համայնքը հետևողական մեծ աշխատանք էր տանում այդ նպատակին հասնելու համար: Այդ գործունեության մի մասնիկն էլ «Հունահայկական» ամսագիրն էր, որը տպագրվում էր



Ոսկան արքեպիսկոպոս Գալիաթյանը և Լեոնիդաս Լազոս-Սերեյանը (աջից) Հունաստանի խորհրդարանում, 1991թ.



Հենրի Մորգենթաուի «Բոսֆորի գաղտնիքներ. 1913–1916» գիրքը

1991–1999 թվականներին: Այդ տարիների մեր աշխատանքների գագաթնակետը եղավ 1991 թ-ի ապրիլի 24-ին Հայկական ժողովրդային շարժման պատվիրակության այցելությունը Հունաստանի խորհրդարան և հանդիպումը խորհրդարանի նախագահ Աթանասիոս Ցալդարիսի հետ:

- Կարծեմ Դուք էլ այդ պատվիրակության կազմում եք եղել, այնպես չէ՞:

- Այո, որպես «Հունահայկական ուսումնասիրությունների կենտրոնի» քարտուղար: Պատվիրակության կազմում էին նաև Ս. Էջմիածնի պատվիրակ, թեմիս առաջնորդ Ոսկան արքեպիսկոպոս Գալիաթյանը և ՀԺԾ-ի արտաքին հարաբերությունների պատասխանատու Լեոնիդաս Լազոս-Սերեյանը: Մենք խորհրդարանի նախագահին ներկայացրեցինք Հունաստանի 162 (հետագայում՝ 173) պատգամավորների կողմից ստորագրված՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանը զորակցող բանաձևը: Հունաստանի խորհրդարանական բո-

լոր կուսակցությունների ներկայացուցիչ պատգամավորների պատվիրակության հետ այցելեցինք նաև ՄԱԿ-ի Աթենքի գրասենյակ՝ պահանջելով ՄԱԿ-ի կողմից դատապարտման բանաձևի ընդունում:

- Մտավորապես որքա՞ն է հայերի թվաքանակը Հունաստանում այժմ: Որո՞նք են ամենա հայաոճ հիմնական բնակավայրերը:

- Հունաստանում հայերը միշտ ներկա են եղել, հին ժամանակներում՝ որպես ուսանողներ, Բյուզանդիայի ժամանակ՝ որպես կառավարիչներ և զորավարներ: Նոր համայնքը կազմվել է Մեծ եղեռնից և Իզմիրի աղետից հետո: Հայության թվաքանակի մասին դժվար է ստույգ թվեր ներկայացնել: Թերևս «յան»-ով ազգանուն ունեցողների թիվը կարող է 40000-ի հասնել, սակայն դրանց մեծ մասն ընդհանրապես ներկա չեն հայկական միջավայրում, դերակատարում չունեն համայնքի կյանքում: Հայերը հիմնականում ապրում են Աթենքում և հյուսիսային Հունաստանի մի շարք քաղաքներում:

- Հունաստանի հայ համայնքն ավանդաբար մեր ամենակտիվ և ծաղկուն համայնքներից է եղել: Ե՞րբ է այն ծևավորվել, և որո՞նք են համայնքին հուզող հիմնական խնդիրներն այսօր: Ինչպե՞ս եք բնութագրում համայնքի ապագան:

շար՝ էջ 10

Սկիզբը՝ էջ. 9

- Առաջնային հարցը «համայնք» դառնալն է, որի համար նախապայմանը միասնական նպատակն ու համախմբվածությունն են: Ձևական հայտարարություններով ոչինչ չի իրականանում: Իսկ նպատակներն իրագործվում են տրամաբանական, գիտակից և հետևողական աշխատանքով:

- Ի՞նչ առաջնային խնդիր ունի այսօր հունահայ համայնքը, ապագայի նկատմամբ ի՞նչ մտահոգություններ:

- Սփյուռքն ընդհանրապես, ոչ միայն Հունաստանում, ինքնուրույն տագնապի մեջ է: Կուսակցական հատվածապաշտությունը հարվածի տակ է դրել մեր արմատները:

Պարզ հայը, որը հեռու է ամեն տեսակ քաղաքականությունից, այս կացությունը տեսնելով՝ չհիասկանում, թե ո՞վ է իրականում հայը, և ինչո՞ւ հայկական մի խմբակ հիմնովին մերժում է, չի հանդուրժում մյուսին:

- Հունաստանի հայհամայնքի ներքին բազմազանությունն ապահովող գործոններից մեկն էլ, ինչպես Սփյուռքի մյուս համայնքներում, տարաբաժանումն է ավանդական և ժամանակակից սփյուռքների: Այս առումով ի՞նչ խնդիրներ կան Հունաստանում:

- Ժամանակակից կամ նոր սփյուռքը Հունաստան հասնելով ոչ մի օգնություն չստացավ առկա կառույցներից՝ ո՛չ նյութապես, ո՛չ բարոյապես: Հայաստանից «խռոված» և հայրենիքը լքած հայն այստեղ ավելի վիրավորված զգաց իրեն: Բացառություն էր միայն ոչ կուսակցական հիմքի վրա հիմնված «Հայաստան» հասարակական մշակութային կենտրոնը, որը փորձեց վեր կուսակցական սկզբունքներով միավորել նրանց:

- Տարիներ շարունակ համագործակցել եք Հունաստանի Աժ պատգամավոր Լիանա Կանելիի «Նեմեսիս» ամսագրի հետ: Պատմե՞ք այդ համագործակցության մասին:

- Պատգամավոր Լիանա Կանելիի՝ մեծ տարածում ունեցող «Նեմեսիս» ամսագրի գոյության հինգ տարիների ընթացքում (1999–2005 թթ.) շուրջ 60 ընդարձակ ուսումնասիրություն-հոդված են հրատարակել, որոնք ընթերցողին ծանոթացրել են հայությանը և հայ-հունական առնչություններին:

- Մի ժողովրդի մասին օտարազգի թերթում մաման տևական հոդվածաշարի հայտնվելը, կարծում եմ, կարելի է Գինեսի ռեկորդների գրքում ներառել:

- Պատճառներից մեկը, թերևս, նաև ամսագրի խմբագրի՝ Լիանա Կանելիի անձնական նոտեցումն էր: Նա թե՛ որպես պատգամավոր, թե՛ որպես իրավաբան միշտ հայության կողքին է կանգնել: 2016 թ-ին նա մեկնեց Հայաստան, ազատագրված Արցախ և նույնիսկ առաջնագիծ: Այնուհետ այստեղ իր տպավորությունների մասին հանդես եկավ դասախոսությամբ, որի ժա-



Հովսեփ Զատեսյանը, «Հայաստան» շաբաթաթերթի խմբագիր Դավիթ Այվազյանը և «Ժամ» ամսագրի գլխավոր խմբագիր Աննա Գիվարգիսյանը, 2015 թ.

մանակ հայերին կոչ արեց մեկնել Արցախ, առաջնագիծ, գորակցել հայզին վորին:

- Հայկական մամուլի հետ ձեր համագործակցության մասին ի՞նչ կպատմեք:

- «Հայ ֆետայի» և «Հունահայկական» ամսագրերի հետ իմ համագործակցության մասին արդեն պատմեցի: Վերջին հինգ տարիներին խմբագրել եմ նաև ՌԱԿ «Նոր աշխարհ» շաբաթաթերթի հունարեն բաժինը: 2015 թվականին Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով խմբագրել եմ «Հայաստան» շաբաթաթերթի հունարեն հավելվածը:

- Մեր բոլոր գաղթօջախներում առաջնային խնդիրը եղել և մնում է ուժացումը:

- Այսօր իրողությունն այն է, որ ոչ միայն Սփյուռքը, այլ ընդհանուր հայությունը լուրջ վտանգի առջև է կանգնած: Տագնապը համազգային է, ուստի պատասխանն էլ պետք է լինի այդպիսին: Հունաստանի հայության իրավիճակը կարող է փոխվել միայն որպես այդ ընդհանուր կացության մի մասնիկը:


- Հայկական ավանդական երեք կուսակցություններն էլ (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴԴԿ) ակտիվ են գործում համայնքում: Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք հաջողվել է հայկական այս կուսակցություններին ազգային, քրիստոնեական եղբայրություն պահպանել օտար ափում, թե՞ քաղաքականությունը մնում է քաղաքականություն՝ լինի Սփյուռքում, թե հայրենիքում:

- Ինձ համար անհասկանալի այն է, թե ընդհանրապես ի՞նչ անելիք ունեն հայ կուսակցությունները Սփյուռքում: Կուսակցությունը, որպես կանոն, իշխանություն նվաճելու միջոց է, Սփյուռքում ի՞նչ իշխանության են ձգտում նրանք:


- Հունաստանի հասարակական-քաղաքական կյանքում կա՞ն հանգուցային դեր ու նեցող հայեր: Համայնքը երկրում քաղաքական զարգացումների վրա ազդելու որևէ լուրջ լծակ ունի՞ արդյոք:

- Հայկական կուսակցություններին, ցավոք, ձեռնտու են վերահսկվող փոքր «գետտոները»: «Գետտոյում», որպես կանոն, մեծ ընդունակություններ ընդհանրապես չեն աճում: Օտար միջավայրում զանազան ասպարեզներում փայլող հայերը հաջողությունների են հասնում, իրենց նվաճումները ձեռք են բերում սեփական ջանքերով, առանց հայկական միջավայրի օգնության կամ նույնիսկ իմացության: Նման ասպարեզում լուրջ լծակներ ունենալու համար, ինչպես մշեցի, անհրաժեշտ են մշակված ծրագրեր և համապատասխան գործունեություն:

- Ի՞նչ հիմնական նպատակներ է հետապնդում Ձեր գլխավորած «Հունահայկական ուսումնասիրությունների կենտրոնը» Հունաստանում: Հույն մտավորականներն անդրադառնո՞ւմ են հայկական խնդիրներին:



«Հայ ֆետայի» ամսագիրը (1982–2001 թթ.)



«Նեմեսիս» ամսագիրը

սկիզբը՝ էջ 10

- Ցանկացած հարց լուծելու համար պետք է տիրապետել փաստերին: Հայերն ու հույներն իրենց պատմական հիշողությունը կորցնելու վտանգի առջև են կանգնած: Մենք այդ ճշմարտություններն ու փաստերը հանրությանը ներկայացնելով՝ հակադարձ ուժերն թուրքական իշխանության՝ տարածաշրջանի բնիկ ժողովուրդներին «կատարված իրողության» առջև կանգնեցնելու հերթական ցեղապաշտ քաղաքականությանը, որը բազմազգ երկիրը զուտ թուրքականի է վերածել:

- Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններն արծազանք գտնո՞ւմ են Հունաստանի հայ համայնքում:

- Ցանցային կապի և հաղորդակցության ժամանակաշրջանում իրադարձությունները ոչ միայն արծազանք են գտնում, այլև դա կատարվում է սրընթաց արագությամբ: Անկախացած Հայաստանը, մանավանդ առաջին տարիների արցախյան ճակատում տարված հաղթանակից հետո, հայությունը միավորող, համախմբող կենտրոն դառնալու բոլոր հնարավորություններն ուներ: Մինչդեռ վերջին երկու տասնամյակների ընթացքում կատարվել է ճիշտ հակառակը: Սփյուռքի տարբեր գաղթավայրերում հասակ առած պատանին, երիտասարդը, իր հայրենիքին և պատմությանը կապվելու համար իր երկրով հպարտանալու կենսական անհրաժեշտություն ունի, ինչը, մեղմ ասած, բացակայում է այսօր:

- Դուք հասարակական և մշակութային ասպարեզում էլ դերակատարություն եք ունեցել: Խոսե՞նք Ձեր մասնակցությամբ թատերական բեմադրությունների մասին:

- 2006 թ. տիկին Լուսի Մենենդյանի հետ հիմնեցինք «Ծիածան» թատերախումբը, որին անդամակցում էին հայ և հույն ոչ պրոֆեսիոնալ դերասաններ: Ընտրված «Ծիածան» անունն էլ այդ բազմազանությունն ընդգծելու նպատակ ուներ: «Ծիածանը» մինչ օրս հայերեն և հունարեն 16 բեմականացում է ունեցել: Յուրաքանչյուր թատերական

ներկայացումից առաջ հանդիսատեսին տեղեկատվություն է տրվում ներկայացման, պիեսի հեղինակի, ասելիքի կարևորության մասին՝ զվարճության, ժամանցի հետ մեկ տեղ մաս հոգիները սնուցելու նպատակ ու նենալով:

- 88-ի երկրաշարժից հետո Հայաստանին զորակցության հանձնախմբի ղեկավար մարմնի անդամ եք եղել: Պատմե՞ք այդ մասին:

- Այո, այդ և հետագա տարիների ընթացքում մեծ աշխատանք ծավալվեց Հայաստանին օժանդակելու համար: Տարբեր բնագավառներում արդյունավետ քարոզչության արդյունքում մեր աշխատանքին հոժարակամ օժանդակել է մաս հույն ժողովուրդը: Այդ գործունեության շրջագծում խմբագրել են «Տուրք Հայաստանին» գիրքը, որ 1989 թ. հազարավոր տպաքանակով տարածվեց Հունաստանում: Գրքից ստացված հասույթը նույնպես հատկացվեց այդ նպատակին: 2006 թ. որպես, «Հայաստանի զորակցության հանձնախմբի» ներկայացուցիչ, որին անդամակցում էին մաս ավել իքան 60 հույն հայտնի մտավորականներ, Ստեփանավան քաղաքում 4,5 կմ կոյուղագիծ կառուցելու ծրագիրը իրականացնելու համար մեկնեցի Հայաստան: Ծրագիրը 2006–2007թթ. իրականությունդարձավ Հայաստան համահայկական հիմնադրամի ծրագրերի շրջանակում:

- Ձեր պատգամը գալիք սերունդներին:

- Գալիք սերունդին պատգամ հղելը մեծ պատասխանատվություն է, և նման պատգամ հղելու համար ես ինձ փոքր եմ համարում: Կարող եմ ասել միայն. որպեսզի գալիք սերունդը ժառանգորդ լինի, նախ ժառանգություն է պետք ունենալ: Իսկ ի՞նչ ժառանգություն է թողնում իմ սերունդը. կոռումպացված իշխանություն և կոռումպացված եկեղեցի՞...

Մի ժողովրդի, որը պատրաստ է պայքարել լուսավոր ասպարեզի համար, անհրաժեշտ է ուղեցույց և առաջնորդող:

Այդուհանդերձ, իմ սերունդի նվիրական փորձից ելնելով, հավատում եմ, որ գալիք սերունդը մեզ հուսախաբ չիանի:

սկիզբը՝ էջ 17.

Բնականաբար թե՛ Ջաքարյանները, թե՛ վրաց ազնվականությունը չէին հանդուրժի Թամարի ամուսնությունը որևէ վրաց իշխանի հետ, ինչը կենթադրեր Վրաստանում դիմաստիական փոփոխություն և ուժերի, հարաբերությունների վերաբաշխում:

1213 թ. մահացավ Թամար թագուհին՝ իր հետ թաղելով Վրաստանի հզորությունն ու փառքը: Վերահաս մոնղոլական արշավանքները փոշիացրին թե՛ վրաց պետության հզորությունը, թե՛ Ջաքարյանների տիրակալությունը:

Հետաքրքիր է, որ չնայած Թամարի կյանքն ու գործունեությունը շատ լավ է ուսումնասիրված, վրաց ու հայ պատմիչները համր են նրա գերեզմանի տեղը նշելիս: Մինչ օրս բազում վարկածներ կան շրջանառության մեջ, Թամար թագուհու գերեզմանը որոնում են Հյուսիսային Կովկասում՝ Ինգուշեթիայում, Աբխազիայում, անգամ՝ Պաղեստինում:

Միայն Վրաստանում հայտնի է Թա-

մարի ենթադրյալ չորս դամբարան: Վերջերս էլ Քութայիսի Բագրատի եկեղեցում հայտնաբերվեց միջմադարյան իշխանուհու դամբարան, և շատերն առաջ քաշեցին այն Թամարին պատկանելու վարկածը:

Հետաքրքիր ավանդություն կա, որի համաձայն՝ Թամարի դին դրված է եղել Մցխեթի Մայր եկեղեցում: Եվ փակ դագաղը թաղվել է տասն այլ դագաղների հետ, որպեսզի ոչ ոք չիմանա, թե իրականում որն է թագուհու գերեզմանը: Համաձայն ավանդության՝ թագուհին կտակել է, որ իրեն թաղեն թաքուն վայրում, որպեսզի թշնամիները չկարողանան հասնել իր գերեզմանին և պղծեն այն:

Սակայն գոյություն ունի Թամարի դամբարանի հայկական վարկած ևս: Լոռու մարզի Ախթալա քաղաքում բարձր ժայռ կա՝ կոչված Լենկ-Թեմուրի բերդ: Այստեղ իսկապես X դարի ամրոց կա, որտեղ պահվել են Կյուրիկյան արքաների գանձերը: Տեղացիների մեջ շրջանառվող Լեգենդի համաձայն՝ այդ բարձր ժայռը փուչ է, գաղտնի, քո-

ղարկված մուտք ունի, և հենց այդ ժայռի մեջ է թաղված վրաց թագուհին: Ախթալան միջմադարյան Պղնձահանքն է՝ Իվանե Ջաքարյանի հոգևոր կենտրոնը: Հաշվի առնելով Իվանեի ու Թամարի հարաբերությունները և այն, որ Իվանեն իրավ վրաց պետության առաջին դեմքն ու ամենաազդեցիկ գործիչն էր, այս տեսությամբ պետք է լուրջ մոտենալ:

Մեկ այլ ավանդություն. ախթալացիների մեջ շրջանառվում է, որ Թամարին թաղել են այդ ամրակուռ ժայռի մեջ, ապա սպանել հուղարկավորության մասնակիցներին, մեկ ուրիշ ջոկատ սպանել է նրանց սպանողներին... Ու այդպես կորցրել են բոլոր հետքերը:

Թամարը մի որդի ուներ՝ Գեորգի Լաշան, որ թագավորեց մոր մահից հետո: Նա թույլ ու անկամ տիրակալ էր:

Թամար թագուհուն վրաց և ռուս ուղղափառ եկեղեցիները սքաբախել են: Իսկ 1917 թ. ի վեր վրաց եկեղեցին ամեն տարի նրան նվիրված տոն է նշում՝ Թամարոբան:

Վահե Անթանեսյան